ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ - ԹԻԻ 631 Կ. ՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ, 1898 ՆՈՅԵՄԲԵՐ 14–26 12 Ռէճէպ 1315 14 ԹՇՐԻՆ ՍԱ 1314 Գ. ՏԱՐԻ, ԹԻԻ 631

20 ՓԱՐԱՁ

Բիւզանդիոն

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ

20 ՍԱՆՉ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ ԲԻՒԶԱՆԴԻՈՆ ՓԼՋԵԱՆ

PUZANTION

Journal Armenien Quotidien, Politique, Financier et Litteraire

Directeur - Propriétaire

PUZANT KÉTCHIAN

Bab-Ali Djaddessi, No. 23 – 25.

CONSTANTINOPLE

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

"بيوزانتيون"

امتيجه يومى سياسى غزته صاحبى وباصمرسولى

بيوزانت كجيان

مطبعه دارى خانى بابعالى جاده سنده ۲۳-۲۵ نومرولى دائره مخصوصه ده در

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ո՞ՒՐ ԿԵՐԹԱՅ ԱՆԿԼԻՒԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ Գ. [*]

Ո՛չ միայն Անգլիոյ եկեղեցիին մէջ ծիսականութիւնն ակներեւ կ՚յառաջդիմէ, ո՛չ միայն հազարներով կ՚համրուին այսօր անկլիքան եկեղեցականները՝ մեծ ու պզտիկ՝ որք ծիսականութեան յարած են իրենց եկեղեցիին ներած չափէն աւելի, այլ և նոյն երեւոյթ կ՚դիտուի նոյն իսկ Ամերիկայի մէջ, Բիւրիդէններուն [Մաքրականներուն,] ծայրայեղ, արմատական Բողոքականներուն այն նախասիրական հայրենիքին մէջ, ուստից նաեւ եկած մուտ գտած է Բողոքականութիւնն Հայոց մէջ։

Գիտէք որ Անկլիքանութիւնն ինչ որ է Անգլիոյ համար, Եպիսկոպոսականութիւնը նոյն բանն է Ամերիկայի համար։ Երկուքն ալ նոյն դաւանանքն ունին և նոյն Աղօթագիրքը կամ ժամագիրքը։ Միայն թէ Եպիսկոպոսականութիւնն Անգլիոյ մէջ Ազգային Եկեղեցի է, «Անգլիոյ եկեղեցի»[Church of England]անունով կ՚ճանչուի, և ժամանակին Թագաւորը կամ Թագուհին իր պաշտպանն է, մինչ Ամերիկայի մէջ «Ազգային Եկեղեցի» դրութիւնը չկայ։ Պետական եկեղեցի մը [State Church] որ Տէրութենէն Թոշակ առնու, և իր գլխաւոր պաշտօնեայք Տէրութենէն անուանուին, գոյութիւն չունի Միաց։ Նահանգաց մէջ, ուր ժողովուրդն իր ուզած եկեղեցիները կը պահէ կ՚պահպանէ իր ուզած ձեւով, ինչպէս անգլիացի ազգն ալ կ՚ընէ Non-conformist [Նոն-քոնֆորմիսթ, ոչ-անկլիքան, պետական եկեղեցիին «չհամակերպող»] բողոքական եկեղեցիներուն, նաեւ կաթոլիկ եկեղեցիներուն համար, որ երբեմն «Ազգային եկեղեցին» էր Անգլիոյ, և հիմա նոյն երկրին բազմաթիւ մասնաւոր եկեղեցիներէն մէկն է, որք կ՚պահուին «կամաւոր դրութեամբ»։

Սրբ. Նոր վիճակագրութիւններէ կ՚հակուիլ որ Ամերիկայի այս Եպիսկոպոսական եկեղեցին տարուէ տարի աւելի կ՚յառաջդիմէ քան միւս բոլոր բողոքական [անձէս] եկեղեցիներն, և թէ հիմակ՝ առանձինն առնուելով՝ ամէնէն բազմանդամ եկեղեցին եպիսկոպոսականութիւնն է կրնայ ըսուիլ Ամերիկայի մէջ, մինչ, օրինակի համար, դար մը յառաջ Եպիսկոպոսական եկեղեցին ոչինչ էր ամերիկեան ազգին մէջ, անձէս Բողոքականութեան է՚ն արմատական ճեւերն էին որ գերակշռէ կ՚իշխէին հոն։

Աւելի ուշագրաւ պարագան սա՛ է որ Եպիսկոպոսականութիւն դաւանող կամ Եպիսկոպոսականութեան յարող Ամերիկացիք ժողովուրդին չքաւոր, Թերուս, կամ ազէտ, խեղճ դասակարգերը չեն, այլ, ընդհակառակն, ամէնէն զարգացեալ, ամէնէն նրբացեալ, և ունեւոր, դիրքի, կարողութեան տէր անձնաւորութիւնքն են։ Անգլիոյ մէջ ալ նոյնն է Անկլիքանութեան համար։ Ժողովրդեան մանաւանդ բարձրագոյն դասերն են որ պատիւ կ՚սեպեն Churchman [Ազգային Եկեղեցիին անդամ] համարուիլ։ Անշուշտ, Անկլիքան եկեղեցին ալ կ՚ունենայ միլիոնաւոր ազգատ, խեղճ մարդիկ, որոց համար յատուկ «առաքելութիւնները» ունի որք կ՚շրջին ամէն մեծ քաղաքի ամէնէն ստորին թաղերն ու փողոցները, կամ կ՚պաշտօնավարեն յետին գիւղերուն մէջ։ Բայց համեմատաբար ուրիշ ո՛և է Բողոքական Եկեղեցիի, Անկլիքան Եկեղեցին ամէնէն չատ կ՚պարունակէ ազգին լուսաւորեալ, զարգացեալ, ներքացեալ դասակարգերուն պատկանող անդամներ։

Եւ ճիշտ այս դասերու մէջ է որ Միասկանութիւնն հսկայաքայլ կ՚յառաջդիմէ։ Հասարակ ժողովուրդն հաւատարմագէս երկու դասակարգի բաժնուած է։ Անցեալ օր Թոյշի մէջ կարդացինք Լոնտոնի եկեղեցիի մը ժողովրդապետին նամակն, որ կ՚գանգատէր թէ բողոքական հասարակ ժողովուրդն իրեն սպառնալիք ըլած է՝ նոր արարողութիւններ մտցնելուն համար իր եկեղեցիին մէջ։ Ջերն Թոյշի մէջ ալ գրուեցաւ անցեալ շաբթուն թէ ուրիշ թեմի մը հասարակ ժողովուրդն ինք վախեցեր է որ ծիսասէր եկեղեցական մը «պատարագ» մատուցանէ, և՚ն. և՚ն։ Բայց ժողովրդեան «վերին դասերն» հետզհետէ կ՚միտին «Վերին եկեղեցւոյն» [High Church], ինչպէս կ՚կոչին Անկլիքանութեան ծիսասէր մասը, զանազանելով զայն «Ստորին Եկեղեցիէն» [Low Church], որ է ոչ ծիսասէր մասը կղերին ու ժողովրդին։

Հիմա բողոքական ընթերցող մը պիտի ըսէ մտովի. «Բնաւ պատիէն ժամանակաւ ըրածը կ՚ընէ կոր։ Բողոքականութեան մէկ ճիւղը միւսին դէմ յարուցանելով, Բողոքականութեան վարկը կոտրել կ՚ուզէ կոր։ Բողոքականներուն ազատամտութիւնը, նեղոզմտութիւնը, լայնամտութիւնը, Բողոքականութեան դէմ զէնք կ՚ընէ կոր։ կարծիքի ազատութեան չնորհիւ Բողոքականութեան մէջ մուտ գտած ձեւաչատութիւնը մատը փաթթոց է, և չի տեսներ որ Բողոքականութիւնն այսօրուան օրս աշխարհի էն զարգացեալ ազգերուն կրօնքն է։ Թէ Բողոքականութիւնը կայ և կ՚մնայ, եւ օրինակը չկայ սա երեք դարու պատմութեան մէջ որ անգամ մը բողոքական եղած ազգը նորէն կաթոլիկ դարձած ըլայ,» և՚ն. և՚ն։[*]

Բաննատան չէ՛, սիրելի բողոքական բարեկամ, Բողոքականութեան վարկը կոտրելուն օգո՞ւտն ինչ է, և օրուան այս ժամուն կրօնային վէճերն ինչ արժէք կրնան ունենալ։ Բայց մեր նկարագրած վիճակը կ՚ցուցնէ թէ Բողոքականութիւնը մեր մէջի Բողոքականը պակաս հակված են։ Բողոքականութեան մէջ ծէսերու, արարողութիւններու, խորհուրդներու քիչ չատ տեղ կայ եղեր, և իրենք այս կարեւոր պարագան կ՚անտեսեն եղեր։ Բողոքականութիւնն իրենց կարծածէն աւելի լայնագի, աւելի ներողամիտ դաւանանք մ՚է եղեր։ Լութերի հետեւող ըլլալնին չուզանալով հանդերձ, այսօր միլիոնաւոր Անկլիքաններ և Եպիսկոպոսականները կ՚ընդունին չատ մը բաներ զորս Հայ-եկեղեցին ի վազուց անտի ընդուներ է, ու կ՚գործադրէ։ Բ. սել է այս ծէսեր, այս արարողութիւններ, խորհուրդներ Բողոքականութեան ծայրայեղ հետեւողներուն պըղծածին չափ հակաեւաւանական, հակաքրիստոնէական, կռապաշտական բաներ չեն եղեր նո՛յն իսկ միլիոնաւոր Բողոքականներու համար։ Ա՛հա մեր ցուցնել ուզածը։ Միայն այս կէտին պաշտպանութիւնը կ՚բաւէ մեզ, և այս օրուան օրս մեր ձեռքը գտնուած գործնական ապացոյցը պէտք եղածէն աւելի են այդ միակ կէտն ապացուցանելու համար։ Մեր ի մէջ բերած իրողութեանց մէջ ոչինչ ընդդէմ է Բողոքականութեան, բայց կայ բազում ինչ Հայ. եկեղեցւոյն ի նպաստ։

Մ՚ը ուզեմիտ, ո՛ր անկողմնակալ ուսումնասէրը կրնայ այսօր առանց ապշութեան, պէտք է նաև ըսենք՝ առանց չիկնելու ձեռք առնու նախորդ սերունդին օրով Ամերիկացի Միսիոնարներուն Հայ. եկեղեցւոյ դէմ հրատարակած գիրքերն ու տետրակները, կանոն Հաւատոյներն և որ ի կարգին, բայց ի Մէյնըէրէ Էերըլոներու մէջ անոնց գրածներէն, որով Հայ. եկեղեցին կ՚յորդորէին «աղաւաղուած, ապականած մէկ ձեւը Քրիստոնէութեան. աւելորդապաշտութեան, անապաշտութեան մէջ թաղուած մնացորդ մը Քրիստոնէութեան, Մարեմապաշտ, կռապաշտ, աւանդամոլ, և՚ն. և՚ն. եկեղեցի.»—Ինչո՞ւ, ի՞նչ պատճառաւ.—Ձի՛չտ այս Միսիոնութեան պատկերներուն, ճիշտ այս սրբոց պատկերները, ճիշտ այս սուրբ և անմահ Պատարագին, ճիշտ այս խունկին ու այս մոմին պատճառաւ, զորս այսօր իրենք կատարելագէս քրիստոնէական խորհուրդները, քրիստոնէական արարողութիւնները, քրիստոնէական կարգ ու սարքեր կ՚մտցնեն, կամ կ՚տարածեն ցայսօր բողոքական ճանչուած եկեղեցիներ, որք Բողոքականութեան հիմն ու սիւնն ու պահպան հրնչուակներն էին։ Ազէ՛, կրնաս արդեօք կռապաշտ, աւանդապաշտ, խաւարեալ, պատկերապաշտ, Քրիստոնէութեան անկեալ ձեւ, ևլն. յորդորել բոլոր այս անկիլքան եւ եպիսկոպոսական եկեղեցիներն, Օքսֆորտի և Քէմպրիճի Համալսարաններէն Աստուածաբանութեան Տոքթոր բոլոր այս փայլուն «Տիվայն»-ները, «Բայդ Րէվըրենտ»ներն, արքեպիսկոպոսներն, եպիսկոպոսները, «Րէքթոր»ները, Քհոբէդները, երէցներն ու վարդապետները. բոլոր թափորը «Քէբճիմէն»ներու, որք, ո՛վ սոսկալի նորութեանս, հիմակ հանդիսաւոր թափոր կ՚շրջին եղեր եկեղեցիներուն մէջ. խնկելով, երկրպագելով եկեղեցիներուն չորս կողմը, ջահերով, մոմերով լուսաւորուած եկեղեցիներուն, մինչ տակաւին չեն մտցուած այն օրեր երբ այս բաներն ընդ Հայ. եկեղեցւոյ պաշտօնեայք ծաղոտ առարկայ կ՚ըլլային Ամերիկեան լոյսէն նոր լուսաւորուած, նոր նախապաշարուած նորադարձ բողոքականներէ։

—Ջի՞ն մոգուցած։ =Բայց ո՛հ, ո՛չ, բաներախտապէս չատո՛նց մոգուցած....

ԳՐԱԿԱՆ ՆԻՒԹԵՐ

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԻՐԻԿՈՒՄԱՆ ԽՈՉԵՐ

Տերևներն որ կ՚թափէ, սա պէղնած ու չոր տերեւներն ազազուն, միաքս իրենց հետ կ՚քաշքշեն, հո՞ւն ուր կ՚երթան հէք մարած տերեւներն անզոր, հողին հետ փշի դարձող տերեւներն անկենդան, կամ ծովուն ալեաց վրայ ծփծփացող տերեւներն երջանիկ. միաքս իրենց հետ կ՚քաշքշեն ցամաքին վրայ փղոցէ փղոցէ, ու ծովուն վրայ նաւակէ նաւակ. իմ բնական տեզերս հողն ու տունը չեմ սիրեր. բայց մի՛ւսն, ա՛խ ծովը, հոգիս կուտայ անոր սիրոյն։ Վերն ամպերը կ՚դիզուին, և վարն տուներնէր կ՚հեծկլտան. ուրուականներ մարդիկն՝ որ փղոցէն կ՚անցնին. ուրուական ծառերն՝ որ իրենց տերեւներէն կ՚բաժնուին. ուրուական տուներն՝ ուր հիւանդներ կ՚մեռնին ու մանկիկներ կը ծնին, տուներն ուր հարսնիքի նշաւակ կ՚որոտայ և մեռելական նշանաբեր խորհրդանշանը կ՚վերջանայ. ուրուական ամէն բան, ուրուական կիներն ու աղջիկներն ալ՝ որ ամպերուն կ՚նային, և ուրկէ վազած արցունքներն ափերնուն մէջ կ՚իյնան զողզոջուն. ես ալ կ՚զողամ, քանզի կեանքի մէջ այդ ամպերն ալ կ՚սիրեմ, այդ արցունքները կ՚կլեմ. բայց երբ խոստումդ կայ վայելելու ամպին տակէն կեանքի կապոյտին ծիծաղն հազեցնուագ։

Կովու կառքն որ փղոցէն կ՚անցնի փայտ բեռցած, կեանքի սէրը կուտայ սրտիս, գեղջուկ կեանքի սէրն՝ որ իր խոնարհութեան մէջ չատ անգամ քաղաքացիին կեանքէն ազնուական է. ու մարդուին կեանքն որ կ՚երգէ կառքին վրայ, չատ աւելի կ՚նախընտրեմ քան այս փառաւոր կառքին մէջ նստած երիտասարդին կեանքը փառազարդ. ասոր կեանքը տղմոտուկ է, անիկա կ՚պարի ա՛յնպէս ինչպէս կ՚պարի մարդը ճչմարիտ, զոր Աստուած դրաւ Դրախտին մէջ, որ Դրախտէն դուրս ա՛լ աւելի երջանիկ էր քան քաղաքակիրթ մարդը բազմագէտ։ Ես այն առջի մարդը կ՚սիրեմ՝ որ հողն ու ծովը կ՚սիրէ, գիշերը բաց օդին մէջ կ՚պառկի, կռնակն հողին և աչքն երկինք ուր աստղերը կ՚չողան և լուսինը կ՚հիւծի, ես այն գեղջուկ մարդը կը սիրեմ որ այս ամէնուն Արարիչը կը պաշտէ։

Երկու ժամէն իրիկուան եկեղեցի զանգակը պիտի հնչէ ու եկեղեցի մտնեմ. հոն ալ ձեր սիրած մարդիկը պիտի չտեսնեմ, հոն իմ գեղջուկ գաւառացիներս պիտի գան մաշած հագուստներով, բակիկ ոտքերով որք հող կ՚հոտին, կոշտ ձեռքերով՝ որք խաչը պիտի գծեն իրենց կուրծքին վրայ լայն ու սիրակարօտ. անոնց բերնին մէջ Աստուած պիտի փառաւորի և տղուն բերնէն քանամեայ ծնողքին ու հարազատներուն անունը պիտի թռչի, և անոնց բերնին մէջ դալարու Հայոց թափառիկը պիտի հոլովուի դարէ դար, մինչև այն օրն՝ ուր ալ մարդիկ անհետանան մարդատեաց ու անձնատեաց։

Մեք, մեր տուները, մեր սրտերն հակապատկերն ենք անոնց սրտին, հոն հեռ ու նախանձ վիլար կ՚գգուէն չարախանձ. մեք գազաններ ենք անլուր՝ որ վիլար կ՚ուտենք յաբխեան, ու չենք հաւներ անոնց որ բազկատարած կ՚աղօթեն, ոտքերնին հող կ՚հոտի, և ձեռքերնին խաչ կ՚գծէ կուրծքերնուն վրայ. չէ՛, չենք հաւներ անոնց, քանզի Աստուծոյ կ՚հաւատան և դիտեն յարգել տարիքն ու փորձառութիւնը. իսկ մեք յանձնապաստան մինակ հարուստը կ՚յարգենք, երբեմն նոյն իսկ այն կեղծաւոր հարուստներն՝ որոնց ձեռքերն հող ու աճառ կ՚հոտին դեռ։

ԵԼԻՏԵՐՊԷ

ԸՆԿԵՐԱՑԻՆ ՆԻՒԹԵՐ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԱԿՈՒԱՆԵՐՈՒՆ

Մեր ցաւալի պակասներէն մին առողջապահութեան մասին մեր տգիտութիւն է։ Իրաւ է որ այս ճիւղի վրայ բաւական գիրքեր գրուեցան կամ թարգմանուեցան վերջերս, նաեւ մեր ժողովրդին մեծ մասն երբե՛ք կարեւորութիւն չի տար այս տեսակ հրատարակութիւններու. չատ մը գաւառացիներ ձեր վրայ պիտի խնդան, եթէ ըսես թէ առողջ ապրիլը կամ քիչ մը երկարակեաց ըլլալը մեր ձեռքն է. «Մարդուս ճակատն ի՞նչ գրուած է նէ ան կ՚ըլլայ» կ՚ըսեն։

Բէլճիքի Մէյսոթէօնի թղթակիցն առաջարկեր է որ Թերթերն տեղ առողջապահական գրուած մը գտնուի. իրաւունք ունի։ Տ.թէ. Իթթիհատճիի միջոցով հրատարակուած առողջապահական ժողովրդային տետրակներ տուած եմ. ձեմ գիտեր թէ հիմակ ինչ՞ւ այդ տետրակներէն չկայ։

Քանի մը տարի առաջ խմբագիր մը կ՚առաջարկէր որ մեր եկեղեցիին բեմէն ժողովրդին պարզ առողջապահական քարոզներ տրուին. բայց մեր եկեղեցականներն ատանկ բան մը ո՛չ կ՚խօսին եւ ո՛չ ալ խօսելիք ունին։

Երկու տարիէ չատ Հայ-բողոքականներու հետ ապրած եւ տեսած եմ թէ ինչպէս պատուելին «Տէրոջը խօսք» ին հետ առողջապահական խրատները կ՚խառնէ. եւ առանց կմկմալու կ՚նամ ըսել թէ հայ-բողոքական կինն — իր լսածէն և կարդացածէն օգտուելով — ուսումնապէս աւելի լա՛ւ գիտէ մեր պարտականութիւնը, զանակ խնամելու օրէնքները, եւայլն։

Անցեալ օր անգլիացի ծանօթներէս մին ինձ կ՚ըսէր թէ, իրեն ծանօթ քանի մը Հայերու գանկին ուշադրութիւն ընելով չատ ցնծած է. «Հոն չա՛տ տափակ է» կ՚ըսէր. ես ալ պատասխանեցի թէ կրնայ ըլլալ ցեղային ըլլայ. ատիկ զատ օրօրոցին մէջ չատ պահակել կրնայ ըլլալ։ Բայց ամէնուուս չըսի թէ մեր գաւառացի մայրեր երախաներուն գանկը կոտրելու աստիճան, պինդ կերպով կ՚կապկըպեն։

Բէլճիքի մէյսոթէօնի թղթակիցն առաջարկեր է որ Թերթերն տեղ առողջապահական գրուած մը գտնուի. իրաւունք ունի։ Տ.թէ. Իթթիհատճիի միջոցով հրատարակուած առողջապահական ժողովրդային տետրակներ տուած եմ. ձեմ գիտեր թէ հիմակ ինչ՞ւ այդ տետրակներէն չկայ։

Քանի մը տարի առաջ խմբագիր մը կ՚առաջարկէր որ մեր եկեղեցիին բեմէն ժողովրդին պարզ առողջապահական քարոզներ տրուին. բայց մեր եկեղեցականներն ատանկ բան մը ո՛չ կ՚խօսին եւ ո՛չ ալ խօսելիք ունին։

Երկու տարիէ չատ Հայ-բողոքականներու հետ ապրած եւ տեսած եմ թէ ինչպէս պատուելին «Տէրոջը խօսք» ին հետ առողջապահական խրատները կ՚խառնէ. եւ առանց կմկմալու կ՚նամ ըսել թէ հայ-բողոքական կինն — իր լսածէն և կարդացածէն օգտուելով — ուսումնապէս աւելի լա՛ւ գիտէ մեր պարտականութիւնը, զանակ խնամելու օրէնքները, եւայլն։

Անցեալ օր անգլիացի ծանօթներէս մին ինձ կ՚ըսէր թէ, իրեն ծանօթ քանի մը Հայերու գանկին ուշադրութիւն ընելով չատ ցնծած է. «Հոն չա՛տ տափակ է» կ՚ըսէր. ես ալ պատասխանեցի թէ կրնայ ըլլալ ցեղային ըլլայ. ատիկ զատ օրօրոցին մէջ չատ պահակել կրնայ ըլլալ։ Բայց ամէնուուս չըսի թէ մեր գաւառացի մայրեր երախաներուն գանկը կոտրելու աստիճան, պինդ կերպով կ՚կապկըպեն։

Ռիւսթեմ բէյ ունի։ 2.— Պզտիկ, տղաք առտուն և իրիկուն իրենց բերանները ֆօղուել վարժուելու են. և պզտիկուց ակռայի վրձին գործածել սկսելու են։ 3.—Ակռաներն առտուն և իրիկունը վրցինէ անցընելու է։ 4.—Ակռայի վրձինը գործածելէ առաջ լաւ է որ կտոր մը օճառի վրայ մեղմօրէն չփէք։ Ակռաները պէտք է վրձինով մաքրուին դէպ ի վեր, դէպ ի վար, խաչաձև և ներսի ու դրսի կողմէն. մասնաւոր խնամք տանելու է լինտին մատ գտնուած մասը մաքրելու. որովհետև այդ մասն և ակռաներուն միջոցներն են որ աւելի վտանգի կամ աւտուելու ենթակայ են։ 5.—Ակռաներով ընկոյզ, կաղին, չաքանակ կոտրել, գերձան կտրել, հանգոյց քակել, ևատոց նման կոշտ ու կարծր բաներ ընել արգիլուելու է. այդ տեսակ փորձերով լաւ ու առողջ ակռաներ անգամ կը վտանգուին։ 6.—Փտութիւն կամ ճաթատուք մը նկատածնուդ պէս, լաւ է որ առանմնաբուժին խորհուրդ հարցնէք. այսպէս ընդհանրապ ապագայ ակռայի ցաւերէ կ՚ազատէք։ [Բոլոր դժուարութիւնն՝ առանմնաբուժին վարպետը գտնելու վրայ է։ Նոյն իսկ «վիպաբան»ներ կան որ շատ լաւ եւ անկարող են։ Ծ. խմբ.] 7.— Եթէ կ՚ուզէք որ ձեր մանկիկներուն թէ՛ կաթի [ժամանակաւոր] և թէ՛ տեւական կամ ապագայ ակռաներու չարքը լաւ ըլլայ, երբեմն առանմնաբուժին քննել տուէք։ 8.—Երբ պզտիկները քիչ մը մեծնան, անոնց տալու է կակուղ և դիւրամարս կերակուրներ. լաւ եփուած թռչուն, կաթ, վարսակապուր, չոր ու փոշիացած ոլոռն [պէզէլիա], և՚ն. ատոնք չատ աւելի առողջարար ու անդարար են քան ձերմակ-հացը խահուէն ու թէյը։ Շաքարեղէնի չափազանց գործածութիւնն արգիլուելու է։ 9.—Եթէ վերոյիշեալ հրահանգները գործադրէիին, խնամ օհ անգամ անառ բահու լուս պէտք պիտի տեսնուէր։ Բ.

Մանչիսթըր

ԼՈՒՐԵՐ ԿՈՎԿԱՍԷ

[ԹՂԹԱԳՈՒԹԻՒՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի]

ՏԳՂԻՍ, 4 Նոյ. 98.

Ա.յս օրերս Ֆինլանտիայի նոր ընդհանուր նահանգապետ ժենեռալ Պոպրիկով իր պաշտօն ստանձնած օր, Ֆինլանտական ժողովրդին ճառ մը խօսեցաւ, ուր ի մէջ այլոց ըսաւ նաև հետեւեալը. «Մեր թագաւորին յայտնի է Ֆինլանդիոյ ժողովրդի անձնուիրութիւնը, բայց Նորին կայս. Մեծութեան նոյնպէս յայտնի է, որ դժբաղդաբար, երկրին մէջ տարածուած է Թիւրիմացութիւն այն սկզբունքներու մասին, որոց վրայ հիմնուած են Ֆինլանտիայի յարաբերութիւնները դէպ ի կայսրութիւն։ Այդ սխալ մեկնաբանութիւններու դադարումը անձնուիրութիւնը դէպ ի կայսրութիւնն ունեցած անձնուիրութիւնէն։ Ռուսաստանի ամբողջ տարածութեան վրայ, Ձարի գահիսոնի տակ գտնուած բոլոր հպատակներուն համար, մէկ հպատակութիւն կայ և մէկ սէր դէպի ընդհանուր հայրենիքը։»

* * *

Ներկայ ուսումնական տարւոյ սկիզբէն, Բեռլինի մէջ միջնադարեան դպրոցներն, ուր նաեւ հրեայները կ՚սովրին, իրրեւ պարտաւորիչ առարկայ մտցուցած են կրօնը հրեական դաւանութեան համեմատ։ Այդ կարգի դասերը յանձնուած բարեբնեաներուն։

* * *

Կայսրուհի Մարիա Ֆէօտորովնայի խուլ և համրները խնամող հաստատութիւնն իր ստացած տեղեկութեանց համաձայն, կ՚ենթադրէ որ ամբողջ ռուսաց կայսրութեան մէջ խուլ եւ համրերու թիւը կ՚հասնի՝ 200,000 հոգիի։

* * *

Տփղիս հոգեկան հիւանդներու հիւանդանոց մը կը բացուի Սոլոլակ կոչուած թաղին մէջ, յատաջիկայ Նոյեմբերին։

* * *

Հրեայ ուսուցիչներուն բոլորովին արգիլուեցաւ հանրային կրթական նախարարութենէն, իրենց գլխարկներուն վրայ կրել պաշտօնական խորհրդանշան [գոգարտ]։

* * *

Տփղիսի քաղաքային խորհրդի դահլիճին մէջ, ուր 500 վինուորցուներ հաւաքուած էին անցեալ օր, եւ ատոնցմէ պիտի ընտրուէին 61 հոգի տեզացի եւ 43 ուրիշ տեզացիներ, անկարգութիւններ տեղի ունեցան քաղաքային պաշտօնատան առջեւ ու չորրդ այդ առթիւ խռնուող ամբոխին մէջ, որուն սակայն չուտով առաջքն առնուեցաւ, եւ ոչ ևս ծանր հետեւանք ունեցող դէպք խափանուեցաւ ոստիկանութեան ջանքերու շնորհիւ։

* * *

Բեզբրսպուրգի հոգեւոր ճեմարանի հանդիսասրահին մէջ Սիմոդի Օպէր-Պրոկուրօրը հրամայեց տալ հոգեւոր նուագահանդէս մը ի պատիւ Անգլիացի Նիւգէլ դատքին եւ ամուսնոյն, եւ Օքսֆորտի համալսարանի ուսուցչապետ Պիրգպէգի, այն ցանկութեամբ, որ այդ Անգլիացի մեծ հիւրերուն գաղափար մը տրուի ռուսաց եկեղեցական երաժշտութեան։

* * *

Ռուսաց բոլոր թեմերուն մէջ հոգեւարձութիւններ կան եկեղեցականն դասի աղքատներուն գրամական նպաստ տալու համար։ Բայց այդ հոգարարձութեանց ստացած նուէրներն աւելի բազմապատկելու եւ միջոցներն աւելի լայնցնելու համար, այսուհետև պէտք է բոլոր եկեղեցիներուն մէջ գանձանակներ տահմանուին, ինչպէս Հայոց եկեղեցիներուն մէջ՝ հայ աղքատներուն օգնելու նպատակով, որպէս զի նուէրներու նոր աղբիւր մը բացուի հոգեւորական այդ խնամակալութեան գործին համար։

* * *

Հետեւեալ նոր գրքերը հրատարակուած են։ 1. «Իրլանտայի դատը», գինը 60 կոպէկ, թարգմանութիւն Սահակ Մալխասեանի, լրագրաց ընթերցողներուն իրլանտական գործին հիմնաւոր գաղափար տտանալու համար առաջնորդ մ՚է այդ գիրքը, փոքր ծաւալով, և իր գինը մատչելի է։ 2. «Հօրօտ մօրօտ», 165 երես, գինը 40 կոպէկ։ Գրած է Ծովհաննէս Մալխասեան։ Այդ գիրքը կը պարունակէ իր մէջ սա վէպիկները, «Աղքատութեան ճիրաններուն» «Գիւղի աղէն», «Հաւատի չուրջը», «Թէ ինչպէս մարդը կրթում է կնոջը», «Հաշի գմրութի կորցրած փիփիլլի փիլիճը»։ Այս պատկերներն առնուած են Ջաւախէթի կեանքէ, և «Հօրօտ մօրօտ» անունով միացուած։

ԱՒԵՏԻՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆՔ

ՔՐԻՍՏՈՆԻՑ ԿԻՒՒՆ Ի Ս. ՏԷՂԻՍ.

—Երեսաղէմ հոկտ. 31 Թուով Սգանատարի Թղթակցին գրած մէկ նամակին մէջ կ՚կարդանք հետեւեալ հետաքրքրաշարժ տողերը։ «Մինչեւով Գերմանական եկեղեցին — փոքրիկ քարուկիր չէնք մը՝ ներքին մասերուն մէջ քիչ մը մութ — Ն. Վեհափառութիւնը Ս. Մինգէական եկեղեցւոյն գլխաւորը գտնուող հրապարակը գացին։ Բրբիստոնէութեան Թերութիւններէն մին եւ օտար դաւանութեանց կողմէ այսպնուելու եւ արհամարհուելու պատճառներէն մին սա՛ է թէ այդ սուրբ տեղեր դաւանական կռիւներու եւ նախանձորդութեան կեդրոն են միայն եւ եղած են չատ գարերէ ի վեր։ Սրդէն Ս. Գերեզմանի եկեղեցւոյն մէջ կայսրը գիտեց թէ ո՞րպիսի նախզգուշութիւններ ձեռք առնուած էին զինքն ընդունելու համար։ Բեթղեհեմի մէջ այս նախզգուշութիւնը աւելի բացայայտ կ՚երեւէին։ Ֆրանսական հիւպատոսն հոս ալ ներկայ էր ո՛չ թէ Գերման կայսրն ողջունելու, այլ իր երկրին պահանջման դէմ տալու, իրրեւ «անդրանիկ զաւակ եկեղեցւոյ» [ինչպէս կ՚կոչուի Ֆրանսա կաթոլիկութեան մէջ] թէ ինքն է պահապանը Սուրբ Տեղեաց։ Ցոյն և Լատին քրիստոնեայք իրարու հետ մրցեցան կայսեր մատնաւոր պատիւով մը

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Հրատ. խմբ. Ա. Ա. Ղազարյան

Հրատ. խմբ. Ա. Ա. Ղազարյան

Հրատ. խմբ. Ա. Ա. Ղազարյան

Հրատ. խմբ. Ա. Ա. Ղազարյան

Հանձնված է արտադրության 13/VI 1956 թ. Ստորագրված է տպագրության 9/VII 1956 թ. ՍՄ 08141. Տպաքանակ 100000. Պատվեր 1200. Թուղթ 84×108/32. 8 մամուլ։ 1200 տառ։ Գինը 1 ռ. 20 կ.

Տպարան № 1 Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչության։ Երևան, Բարեկամության 24։

ԳԱՂԱՓԱՐԸ ԱՐՎԵՍՏԻ ԴԱՐԱՎԱՌԻ ՄԷՋ

Մի իր հարևան մահճակալին վրայ պառկած տեսաւ Բէր-Ֆրանսուան, որ ինքն ալ ծանր հիւանդ էր, ու որուն հետ ամէն գիշեր կը խօսակցէր։ Ասոնք երկուքն ալ ծանր հիւանդներ էին, ու ամէն գիշեր կը սպասէին, որ մահը գայ ու զիրենք տանի։

Բէր-Ֆրանսուան ուրիշ ոչ ոքի հետ կը խօսէր, բայց Ժան Ֆրանսուան ամէն գիշեր կը զրուցէր իր հարևանին հետ, որ ինքն ալ կը պատասխանէր։ Ասոնք ամէն գիշեր կը հանդիպէին, ու ամէն գիշեր կը խոստանային, որ առաջին անգամ որ մահը գար, ան պիտի ըսէ միւսին, թէ ինչպէս կ՚ուզէ մեռնիլ։

Բէր-Ֆրանսուան ըսաւ.

— Ես կ՚ուզեմ մեռնիլ ձիու մը վրայ նստած, ինչպէս զինուորական մը։

Ժան Ֆրանսուան պատասխանեց.

— Ես կ՚ուզեմ մեռնիլ ծովուն մէջ, ինչպէս նաւաստի մը։

Ասոնք ամէն գիշեր կը խօսէին այս մասին, ու ամէն գիշեր կը վիճէին, որովհետև Բէր-Ֆրանսուան կ՚ուզէր, որ Ժան Ֆրանսուան ձիու վրայ նստած մեռնի, իսկ Ժան Ֆրանսուան կ՚ուզէր, որ Բէր-Ֆրանսուան ծովուն մէջ մեռնի։

Ամէն գիշեր ալ ասոնք կը վիճէին, ու ամէն գիշեր ալ ասոնք կը հաշտուէին։

Ամէն գիշեր ալ ասոնք կը խոստանային, որ առաջին անգամ որ մահը գար, ան պիտի ըսէ միւսին, թէ ինչպէս կ՚ուզէ մեռնիլ

ՀԱՅՈՑ ՄԱՐԴԸ ԵՐԲԵՔ ԵՒՍ ՋԱՒՉԱՒ ԽԺՈՂ

ԳՈՐԾԱՐԱՆ ԵՂՈՒԹԵՐՔՆԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՄԱՐ. ԸՆԴՀ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ 13,558 989 — ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՄԱՐ. ԸՆԴՀ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ 3,000,000. — ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՄԱՐ. ԸՆԴՀ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ 5,125,558

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՄԱՐ. ԸՆԴՀ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ 2,927,988 — ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՄԱՐ. ԸՆԴՀ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ 3,000,000. — ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏ. ՄԱՐ. ԸՆԴՀ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ 1,095,873





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՒՈՐ ՄԱՐՄՆԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«ՄՈՍԿՎԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՆՈՒԹԻՒՆ»

ՀԱՄԱՐՈՒԹԻՒՆ ՏԱԼԻՍ ՄԱՐՏԻ 31,000,000 ՌՈՒԲԼԻ • ՄԱՍՆԻ ԿԱՊԻՏԱԼ ԿԱՄ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ — ՎԱՐԿԱՅԻՆ ՏՈՄՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՄԱՐ ՄԱՐՏԻ ԿԱՊԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՐՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆ ԱՌԱՆՑՆԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՐՏԻ ԿԱՊԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՐՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆ ԱՌԱՆՑՆԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՄԱՐՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՄԱՐՈՒԹԻՒՆ ՏԱԼԻՍ ՄԱՐՏԻ 500,000 ԿԱՄ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՊՔԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ 110,000

ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՄԻԱՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆ ԱՌԱՆՑՆԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՈՒՆԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՐՈՂ ԵՆ ՎԱՃԱՌՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ ՄԻԱՅՆ